

Վերջացնելու համար ներկայ ուսումնասիրությունս, մենք ամէն բանէ առաջ կը շնորհաւորէնք Վարուժանը իբրեւ հզօր արուեստագէտ բանաստեղծի մը որ հալած կապարով կը գրէ ոսկի գանգիւններ հանելու համար, որ բոլոր եսապաշտ հիւանդագին գառածումներէ վեր՝ ժողովուրդի մը վերքերը կը դիտէ Կիկլոպեան աչքով, տառապանքին մէջ ու տառապանքէն վեր միանգամայն, յաղթող ըմբոստի մը կանգնագեղ իրանով: Կ'ողջունենք Վարուժանին մէջ հոյակապ տոհմիկ բանաստեղծը, գլուխն ու լանջքը բաց՝ միջօրէին մեծ Արեւին տակ, որուն միակ նախապաշարունը կեանքն է, արեւալիբ կայծակնաշող պայքարը, լուսագիծ շարժումը, կամքը ուղիղ սայրասուր գիծով, եւ որուն ակնարկին առջեւ բոլոր ճշմարտութիւնները կրնան յանգիլ չարչարուած վսեմ գեղեցկութեանը մէջ այն ժողովուրդին որ բոլոր անցքերուն, բոլոր հեղեղներուն, բոլոր մրրիկներուն դիմակալեց կեանքին ու լոյսին հաւատքով եւ մոնչեց իրեն պէս բոլոր նանրամիտ, մեղկ, ու տկար անցորդներուն.

«Կ'երթամ Աղբիւրը Լոյսին...»²⁰: